

Գ Մ Ա Յ Ի Բ Ա Ն Ի Բ Ի

Ամեն ՇԱՐՄ. օրեր կը հրատարակուի :
50 թուղ համար 2 արժ. մ. և կանխիկ վեցանասուն 30 ղ. է համար 40 վր. Գանուցմանց սուղը 3 դարձ է մկ անդամի համար :

Գ Ա Ի Ա Ռ Ե Կ Ա Ն Լ Բ Ա Գ Ի Ի

Գուրա երկնային ճակն ը բաժանորդ այ շվերտերի :
1 րադրայ վերադարձուց քր և է գրուած ուղղել ան ճիտին Ի Կ Վոլա Գուրա խան վարի յարկ թիւ 8-9 :

Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Բ. Ա. Ն. Ա. Ա. Ռ. Ե. Կ. Ա. Ն. Լ. Բ. Ա. Գ. Ի. Ի

Ա. Չ. Գ.

Լ. ՈՒՍԱՆԱՐ Մ. ՓԱՓԱՉԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԻՆ

Պոլս Տեղան-Նոր

Մ. Փափաղեան պատիւ ունի ճանուցանելու արգոյ Հասարակութեան, որ նոր բաղադրութեանց շնորհիւ, փայլուն և յարգարուն կենդանագիրներ, մինչև ցարդ շինածներէն աւելի գոհացուցիչ ձևով և զի բամբակայ դնով շինելու պատրաստ է և կը խոստանայ, ինչպէս մինչև ցարդ, նոյնպէս և ասիկայ վերջը Հասարակութեան կարելի եղածին չափ գոհ ընել : Այս նստին կանխաւ իւր շնորհակալութիւնը ՎՋ յայտնէ Մեծ. յաճախորդ այ :

Կը յուսամք թէ Մեծ. Հասարակութեանը որ կը ճանչնայ արուեստից օգտակարութիւնը և կը յարգէ տաղանքը, սոյն արուեստագէտ երիտասարդին ձեռնարկութիւնը աւելի ևս բաշխելու համար իւր աջակցութիւնն չը վանար :

Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Ազգը օրէնք մը ունի, այդ օրէնքը պէտք է դարձադրի, ամէն ուր որ Հայ կայ, մարմին մը կայ :

Այս օրինաց պահպանութեան ամէն ուր հավանաձանդիր պէտք է ըլլայ, ամենէն մեծէն սիսեղով մինչև ցլեակներ :

Հեռագրի ինդիք մը յուզուեցաւ Ռուսաց Երեսօրհանական ժողովոյ և ազգային վարչութեան Ատենին մէջ : Հեռագրին ողին տակաւին չեմք զիտեր, և ստոր համար կանխածներ կը ծագին մեր մտաց մէջ. բայց սա գիտեմք որ Մ. Պատրիարքը Երեսօրհանական ժողովոյ մէջ չուզէր բացատրութիւն տալ ի ներկայութեան ժողովուրդեան, և դձուրակ նիստ գումարել խնդրեց, որպէս թէ մեծ քաղաքականութիւն մը պիտի յերևան գայր այդ հեռագրին ներքեւէն քաղաքականութիւն մը ամբողջ ազգին, նոյն իսկ վարչութեան անձանց, իսկ իրական Սրբազանի միայն ծանօթ, զի այդ հեռագիրը վարչութեան հրամարեղէն երեք օր վերջը այսինքն ապրիլ 3 ին զարնուած է :

Եւ միթէ մէկ անձի մը ինքնահաճանքովն թեմաքը եղած բան մը ընդհանրութեան ընդունելի կրնայ ըլլալ : Ուրեմն թող որ ինքնաւրոյն հեռագիրը զարնուի :

սկզբունքը դատարարանի է, երեսուցէ մնայ Մ. Պատրիարքին թաշտած սոյդ հեռագրին ինքնին դատարարանի է. զի ստոր խնամք տղային սեպհականութեան մը Գնչուճ կը նշանակէ :

Մենք կը լսեմք թէ Աերկեր վաչա Մ. Պատրիարքին խոստումներ ըրած է. սրբէս զի Հոյոց իրաւունքը Լատիններէն չը բռնարարուի, բայց չեմք զիտեր թէ բանի ինքն զրով եղած են այդ խոստումները : Եթէ բանի են, Մ. Պատրիարքը պէտք էր զայն գրով առնուէր և ոչ թէ անկողն անապարանք հեռագիրը քաշել առանց անպահովոյ :

Հիմայ կը մտայ միայն բան մը որպէս սեպհականութեան պատրաստութեանը համար եղած դաւն հասկնայ, պէտք է որ այդ հեռագրին պատճառները և բացատրութիւնները յայտնուին, կամ ոչդ հեռագիրը յետո կոչուի, անոր հակառակ հեռագիր մ'ողղելով :

Եթէ Մ. Պատրիարքը դարձեալ կարեւորութիւն չաւրով, անտարբեր դատու ի ստոր ներքեւէն անտեղութիւնը պիտի ծնուի : Վասն զի Ազգը չը կրնար ներել զի և է սրտանակայ մը ազգին սեպհականութեանց նկատմամբ անտարբեր և անհայթ դատուի : զի այդ անտարբերութիւնը անձնական անայտնուած համար միայն կրնայ ըլլալ :

Մենք կապանեմք և ի հարկին դարձեալ կը խօսեմք :

Նախորդ թուով Ազգային պարտուց վրայ խօսած ատեն ըսած էինք թէ տղը չատ մը պահանջներ ունի Առաջնորդներէ վանահայրերէ և Թող խորհուրդներէ :

Ասոնց ամենէն աւելի Մ. Պատրիարքը պարտական է յեւ. սնունդին, այնպէս որ Ազգային դոմնը ճշման ներքեւ կը դառնուի Մ. Պատրիարքը այն վարդապետն է զոր երբեք Ազգը կը պաշտէր, զոր մանկնայի թշնամի ճանչցած էր և որ վարդապ. բոյնէն հայրենախօս արժեւեր կը թնուցանէր յայտնու Պօրայ :

Այս այն իրականն է զոր հայրիկի կանուանէինք և զոր տակաւին կանուանենք վերջնայէս այս այն վարդապետն է որ Պատրիարքական գահը անցնելէն վերջը յառնելի ժողովոյ յայտարարեց թէ 5000 զըշ ամսական բաւական է իրեն և Պատրիարքարանի մարտակարարութեան համար :

Ասիկայ Մ. Պատրիարքին խոստումնութիւնն է, սրայ արձանագրութիւնը յայտնի կեցած են :

Ինչ դարձանակի բան յարկը 10000 զըշ ամսական կառնու և ստով գոհ չըլլալով 160 հազար զըշի ալ պարտ մ'ունի անտակին : Ինչ դարձանակի բան, որ նախորդ վարչութեան վերջին նիստին մէջ չը խոսեմք ինչ քաղաքականութեան ամսական 10000 զըշ և կը բնորոշուայ անցեալ ամսով ստորոյ ամսականներն ալ 10 հազարէն տալու զարգանք : Այդ վարչութեան օրով ալ ինչ գերեր խաղաղութեան : Ազգի մը յառաջիկայութեան ամենէն մեծ գործին, գրանցու զաւանդակութիւնն է, որով չունինք քայտը, անկեցած ժամանակին ալ մասնաւոր կը կորզեն զայն, վարչութիւնն և Տնաւ խորհուրդը կառնեն կը անանան :

Գաւառի քաղաքները վաւթար ընթացքի մը մէջ կը գտնուի, զի Ազգին Պատրիարքն ու վարչութիւնը այդ ամենակարեւոր զորքնայն համար անհեմք, յիպոթեզ մը չեն ցուցներ և Ուսումն. խորհրդոյ բողոքներուն տկան չեն գներ :

Այս չարեաց աղբիւրը գտնելու և զայն ի միջոյ բաւնալու է, ժողովուրդն ալ յայդ կը խորհի :

Ա. Ա. Ռ. Ե. Կ. Ա. Ն. Լ. Բ. Ա. Գ. Ի. Ի

Ժողովուրդն զձեզ ընտրած է որպէս զի վանքերը վանահայր ընտրուած թիւն ներէն փրկէք և ազգին կալուածները մասնաւորաց շահուց գործէք չըլլան :

Ժողովուրդն զձեզ ընտրած է որ ամէն պիտահարութիւն իրենց յանձնուած վանաց հաշիւը որահանջէք : Ինչու համար յարք Մ. Պատրիարքի և վարչոյն վանուց հայտները չեմք արահանջեր : Ինչու համար Մշեցւոյն և վանքերոյն քրտին բողոք կանուանած վանքերուն վերաբերելի տեղեկութիւն չունենան չամէն վանքի և Մշեցի ազգայինը :

Ասի անիրաւութիւն մ'է և տակայն ձեր պարտքն է այն ձեր պարտքն է ձեր հակադրութեան յանձնուած Սղոք վանուց վերաբերելի և հայրենաբուն ծածկուած չըլլան չալուն փոյթ անենալ :

Ա. Ա. Ռ. Ե. Կ. Ա. Ն. Լ. Բ. Ա. Գ. Ի. Ի

Վանայ անտնորդ Պօրոյ վարդապետ արքայն թէ Սահմանադրութեան գործադրութեան արդեւը ինքուն համար արքայի դատարարութեան է :

Կը հարցնենք արդ Սղոք վարչութեան ով աքսորեց զՊօրոյ վարդապետ և ինչու :

ՆՈՐ ԲԱՐԵՐԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Եթէ ստուգիւ Սահմանադրութեան թշնամի էր նա, ինչո՞ւ ցարդ վանայ մէջ Սահմանադրութիւնը չը գործադրիր, մինչդեռ Պօղոս վարդապետ աքսորեալ է :

Կը հարցնեմք դարձեալ Ազգ. վարչութեան. ո՞վ հեռագրեց զԳրեհեան Սրբազան Ս. Նշանի վանուց մէջ փակելու համար :

Մինք Ազգ. Պատրիարքարանի խորշերուն մէջ վրէժխնդրութեան ոգի մը կը նշմարեմք, նոյն իսկ այն կլերին վրայ ուրոյ պարտքն է ներող ըլլալ մինչև իսկ իւր թշնամեացը :

Գաւառներէն կը տեղեկանամք թէ Ազգ. վարչութեանէն զատ, Ս. Պատրիարքէն զատ, գիրքեր կը գրուին Առաջնորդաց, Ասի թէ և ասուգութեան կարօտ է, թէ և գաւառները համոզուած են որ Ազգ. Պատրիարքարանի թուահամար և կնիք կրող գիրքերը միայն պաշտօնական կը համարուին, բայց կան ալ գաւառներոր միանորաբար կը խաբուին այդ տեսակ գրութիւններէն և զանոնք Ազգ. Ժողովոյ որոշումները կը կարծեն. վասն զի հաւանական է որ երկու կողմէն զրկուած գրութեանց իմաստը մէկմէկու հակառակ ըլլան: Այսպիսի տեղեկութիւն մը եթէ հաստոյդ է, Ս. Պատրիարքը և զԱզգ. վարչութիւնը բաժանել է, այն իշխանութիւնը զոր Սահմանադրութիւնը միացուցած և մէկը միւսին երաշխաւոր կարգած է :

Սրբազան Պատրիարքին հաճութեամբ բր իսայի և կարասեալ շնորհակալութեամբ այժմ ի մուշ կը գտնուին, եթէ այս մարդիկը յանցաւոր էին, ինչո՞ւ հիմայ Մուշ կը վերադառնան. իսկ եթէ յանցաւոր չէին, ինչո՞ւ այնչափ հալածանք և տառապանք կրեցին և թափառական սլորտեցան աստ և անդ :

Այս ալ ինդիլմէ, զոր պէտք է լուծել :

Առաջարկութիւն Ս. Պատրիարքին

Սրբազան Հայր, երբ Հայոց Պատրիարք անուանեցաք և Մուշէն ի Պօլիս եկաք, ճամբան խումբ մը մանկտի տեսաք մերկ և բոկոտն, որոնք ձեր գթութիւնը կը հայցէին, Ասիկայ ձեր խոստովանութիւնն է :

Պօլիս հասաք և ձեր գահակալութիւնը շնորհաւորելու համար առ ձեզ դիմող անձանց դուրսը և կարեկցութիւնն հրաւիրեցիք այն տառապեալ մանկանց վրայ :

Սամաթիոյ Ժողովուրդը անմիջապէս փութաց հանգանակութիւն մը կազմել և տասը հազար դրշ ի չափ գումար մը հաւաքելով զայն ձեր Սրբազանութեան յանձնել: Ահաւասիկ երեք տարի եղաւ այն օրէն ի վեր և տակաւին այդ գումարը այն տառապեալ հայազգի եղբարց յանձնուած չէ: Բնաւ չէք յիշեր Սրբազան Հայր, այն թշուառ մանկանց ողբն ու լացը և սա խօսքը. «Եթէ զձեզ մոռնաք, Հայրիկ Աստուած ալ զձեզ մոռնայ»: Դուք զանոնք մուցաք. բայց մեռեցաւ չեմք գիտեր :

Մշտնի պատուաւոր ազգայիններ այդ գումարը հրապարակաւ կը պահանջեն այսօր: Ձեզ կը մնայ խորհիլ և այն խղճուեաց տրտաւորը սրբել :

Արարտութեամբ սրտի կարգացիւք թէ վսեմ. Յակոբ Էֆէնտի Բէօշէքեան իւր ազնուուհի տիկնոջ հիւանդութեան առթիւ 40 ի չափ բանտարկեալ հայ եղբարց պարտքերը վճարելով զանոնք բանտէն ազատեց և Ս. Զատիկի օրերուն մէջ զանոնք միջութարեր է: Տրապիզոնցի ազգայիններէն և մեր բարեկամներէն Մեծ. Մ. վսեմ. Յակոբ Էֆէնտի տիկնոջ հիւանդութենէն ապաքինելոյ համար Ղալաթիոյ, Բերայի և Գարակէօմիսի Ս. Եկեղեցեաց մէջ յատուկ բարեմաղթութիւններ և աղօթքներ ընել տուած է :

Արդարև վսեմ. Յակոբ Էֆէնտի մարդասիրութիւնը և առատաձեռն բարերարութիւնը, ինչպէս զինքն ի մօտոյ ճանչցողները կը վկայեն, ընդհանուր Ազգին շնորհակալութեան և երախտադիտութեան արժանի են :

Եւ արդէն Յակոբ Էֆէնտի անցեալը անհուն բարերարութեանց պատկեր մ'է, հետևաբար այնպիսի անձ մը անմուռանալի յիշատակաց արժանի է :

Երանի թէ Ազգին ամեն հարուստները այսպիսի յիշատակներով օրհնուելու համար, Յակոբ Էֆէնտի օրինակին հետեւին և փոխանակ ինքզինքնին միայն մտածելու, իրենց աղքատ ազգակիցներն ու եղբայրներն ալ միջութարելու փոյթն ու եռանդը ունենային :

Ստոյգ ազրիւրէ կը տեղեկանանք թէ Երեմիա սրբազանի համար 500 դրշ ամսական որոշուած է ցարդ 40 և 40 և 40 րոնական ստուակէն. բայց չեմք գիտեր թէ ո՞վ որոշած է այդ ամսականը և ի՞նչ պատճառաւ :

Երբ կրանք որ դրամ չունինք և ունեցած ատեննիս ալ յարգը չենք գիտեր, երբ կրանք որ մասնաւորք ազգեցութիւն կը գործածեն ազգային սնտակին վրայ, թո՞ղ այլք չը մեղադրեն զձեզ :

Երեմիա եպիսկոպոս կարնոյ վիճակը կը խրկուի Սահմանադրութիւնը գործադրելու համար. մենք բաւական չենք սեպեր առաջնորդաց և քննիչներու Ժողովուրդէն հաւաքած դրամը, և կեննեք ազգային սնտակէն ալ ամսական կը վճարենք: Ինչո՞ւ համար, միթէ ազգային սնտակին պարտքն է բոլոր եպիսկոպոսները կշտայնելը :

Այս ամենը բարւաք, մատակարարութեան պակասութենէն յառաջ կուգայ, այս ամենը անհարգութեան և ազդեցութեան արդիւնք է :

Եթէ Ս. Պատրիարքն է այդպիսի որոշում մ'ընողը, զիտանալու է նորին Սրբազանութիւնը որ ոմանց դրամ խոտտանալով, այլոց ամսական և պաշտօն տալով, իւր սիրելիներէն մէկը վան Առաջնորդ կարգելով, ուրիշ մը ի Մուշ, կարելի չէ վան, կարին, Մուշ Աղթամար ևն. իւր իշխանութեան ներքև առնուլ յապահովութիւն ապագայի :

Ապագայի տպահովութիւնը բարւոք պաշտօնավարութենէն կը ծնանի և Ժողովուրդը իւր պաշտօնեայինները յարգել ու խնամել շատ աղէկ գիտէ: Բաւական է որ պաշտօնեայք ամենայն արժանաւորութեամբ հսկեն իրենց պաշտօնին :

Զատիկի տօնին տուրիւ Ազգ. Պատրիարքարանի Բունայ Պատրիարքարանի հետ յարաբերութիւնը վերսկսան :

Զատիկի երկրորդ օրը ինչպէս սովորութիւն է, Գեր. Պատրիարքական փոխանորդը, ընկերակցութեամբ երկու քահանայից, Գաղ. Ժողովոյ Ատենապետ Մեծ. Սինեքերիմ Էֆէնտի, Գաղ. Ժողովոյ անդամ Մեծ. Բարթող Էֆէնտի, Տնտեսական խորհրդոյ Ատենապետ Մեծ. Սարգիս Էֆէնտի և Գարու քէհեասի Էֆէնտի Բունայ Պատրիարքին այցելութիւն տըուաւ և ուրիշ անդամներէ աւելի յարգանք ընդունուեցաւ :

Երէկալ Բունայ Պատրիարքական փոխանորդը յոյն յաներևելեաց և քանի կըղերականաց ընկերակցութեամբ փոխարարձ այցելութեան և շնորհաւորի եկաւ մեր Ս. Պատրիարքին, Գեր. փոխանորդը Եկեղեցի իջնալով ատենտարնութիւն մ'ալ ըրաւ Յոյն լեզուաւ միութեան և եղբայրսիրութեան վրայ որոյ թարգման կանգնեցաւ Հայագէտ Տիմիթի Էֆ. Չօլաքեան :

Երբ մէկ կտրվէն այսպիսի սիրալիր սեռակցութիւնք կըլլան, մեւս կողմէն անարդանքներ տեղի կունենան Բունայ Եկեղեցւոյն մէջ ընդդէմ Գրիստոնէական կրօնի և հայութեան անուան, որուն վրայ մեր Պատրիարքարանին ուշադրութիւնը կը հրաւիրեմք :

—Հինգշաբթի օր Պուլիարաց փոխ-էքզարքը Ս. Պատրիարքին այցելութեան եկաւ, և բաւական տեսակցեցին վերջը Եկեղեցի ալ իջաւ :

—Ուրֆոյի փոխ-Առաջնորդ Դաւիթ վարդապետ զոր վարչութիւնը Մայրաքաղաքս կոչած էր, անցեալ օր Ս. Պատրիարքին ներկայանալով անձնական տկարութեան հարցումներով և շնորհակալութեամբ Ազգ. Վարչութեան հիւանդանոց խրկուեցաւ :

—Գաղ. Ժողովը հինգշաբթի օր չը գումարուելուն պատճառաւ, այսօր նիսակընէ ի Ղալաթիա :

—Աղթամարայ կաթողիկոսական խնդրոյն վերաքննութեան համար, Համապատասխան Ժողովը յառաջիկայ երկուշաբթի օր պիտի գումարուի ի Պատրիարքարան : Աներկմիտ եմք թէ այս անգամ Եկեղեցական Հարք ամենայն արդարատիրութեամբ նախորդ քննութեան թերութիւնքը լրացնելով այս կնճռալից խնդրոյն վերջ մը կուտան :

Մեծապատիւ Յովհաննէս Զանկի Գումանեան մէկ օրինակ Հայրենիք նուիրեց Պուրքէշի Հայոց դպրոցին :

—Վաղը Ղալաթիոյ կերակնօրեայ վարժարանը Բնագիտութեան վրայ պիտի դասախօսէ Մեծ. Սարգիս Էֆ. Յինճանճեան ժամը 6 ին :

—Կիւրիւնէն տեղոյն վարժարանաց վրայօք, հակասական տեղեկութիւններ դրուած են. ոմանք կաւաւրկին թէ տեղոյն վարժարանը անկարգ վիճակի մէջ է, և քանի անձանց ձեռք խաղալիք եղած է. ոմանք ընդհակառակը պնդելով, զոհայոց լի վիճակի մէջ ըլլալը ծանուցանել յետոյ, կը յաւելուն մաս մը հետաւէմ անձանց արդեւք ըլլալին :

—Սեբաստացիք ասկէ երկու տարի առաջ տեղս Սինեքերիմեան ընկերութիւն մը վերակազմեցին ընդ նախագահութեամբ Գեր. Պետրոս վարդապետի. և բաւական ալ գումար մը գոյացաւ խիստ սուղ միջոցի մէջ, արդ կը հարցնենք ո՞ւր մնաց այդ ընկերութիւնը ինչ կընէ, երբ կը գումարուի և ո՞րչափ ստակ հաւաքած է. մարդչդիտեր : Յաւ է ըսել թէ մեր մէջ մարութիւն մը դարձած է միայն փառքի հաճար պաշտօն ստանձնելը :

Սեփաստացոց անհոգութեան և անտարբերութեան պատճառաւ եթէ վարժարանները խանգարուած չլլային մասաւ մանկանց օրինաւոր դաստիարակութիւն տրուէր, բնաւ չպիտի խօսէինք...

Արեւելեան Մամուլը մէջ հրատարակուած նամակէ մը հետեւեալը կը քաղենք:

Առաջնորդ մը կը թողու իր ամբողջ կը գոյ իրեն: զէմ եղած անբաստանութեանց պատախանները... իրազիրներէն անհր զինք կը պաշտպանեն...

մը հետ կը կուռի և այնպիսի ծանր հայհոյութիւն բերնէն կը թոյնէ որ Տաճկի մը միայն ներքին է անպատահաւոր դորձածը...

Ասոնք տեսնելով ինչ զարմանք որ ձեր Չմիւսն ալ շփոթած է իրեն առաջնորդ մը զըտնելու...

մը առջին դրամ՝ աչքը գոց, ձեռքը կը ստըտնընէ որ անհուն մը գտնէ: Գէշ կերպ ընտրութեան...

ԽԱՌՆՆԻ ԼՈՒՐՆԵՐ:

Իյգաֆի պաշտօնեայ ճէփտէթ փաշա Հասարակաց կրթութեան պաշտօնեայ անուանեցաւ:

- Հասարակաց կրթութեան պաշտօնեայ Գէմալ փաշա Պետական խորհրդոյ անդամ անուանեցաւ:
— Սեբաստիոյ կուսակալ Խուրշիտ փաշա Էֆրազի պաշտօնակալ անուանեցաւ:
— Խալիքէի կուսակալ Թաքիտաիէ փաշան Սեփաստիոյ կուսակալ անուանեցաւ:
— Սեփաստիոյ նախորդ կուսակալ Վրստիմ Հաճի Իզգէթ փաշան Էտրնէի կուսակալ անուանեցաւ:
— Վախճանեալ Գամանթօ կոմսի թուանխիւս կոմսը 635 սակի բաշխելու է ամենաշքի աղքատաց:

Table with 2 columns: Item name and Amount. Includes items like Հրէից, Տաճկաց, Յունաց, Հոյոց, Հակահատուն կաթնիկաց, Պոլլարաց, Դատինաց.

Խուսդիւղի Հրէից վարժարանին 10 ընդհանուր աղքատաց համար Պոլլարի տընորէնութեան 25: կը բաշխուի մեր աղքատաց համար զրկուած 50 սակին ետ խրկել մեաւելի են:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԶԱՐԲԱՆԱԼԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ԾԱԼՔԵՊՈՒՐԿԻ ԱՂԱԽԵՆԻՆ

Ազնէս շատ ուրախ էր որ Կիմա քանի մ'օր իւր քով պիտի կենար, եւ այս քիչ ատենին մէջ ջերմ սիրով մը կապուեցաւ անոր հետ...

Ասպետը չորս հինգ օրէն վերադարձաւ, «բարի լուր» կը գոչէր, թշնամիները իրենց սնիրաւ զիւստարութիւններէն հրամարտած են:

խոստացան զձեզ հանդիսութեամբ միմեարեւոյցէք աչնիւ փիկին անոնք որ միաբանած էին 'ի վնաս քո, երբէք դաշտերը պիտի չ'հնձեն, ոչ ոք օտարական անտաններու մէջ, երբէք պիտի որսորդութիւն ընէ, կամ հոն կային դորձածէ:

Ռօղալէնտ երախտագիտութեամբ եւ ուրախութեամբ լցուած չեր գիտեր թէ ինչպէս շնորհակալ ըլլայ իւր աղափախին «Աստուած ձեզի վարձանասոց ըլլայ» կըսէր գուք որ որդին ու որբուայրին կը պաշտպանէք օրհնեալ ըլլաք» սրտին յուզմունքը սաստկանալով ալ եւս չը կրցաւ խօսքը շարունակել, բայց ասպետը հասկըցաւ ինչ որ կուզէր այն արտաբայաբար, Ի վերջոյ մեկնելու ժամը հասաւ, փոքրիկ աղջկանց միմեանցմէ բաժնուելու տեսարանը խիստ սրտառուչ էր, տխուր էին այն զուարթ սիրուն գէմքերը եւ արտասուաց մանր կաթիլներ մաղղըրաի նման անոնց աչերէն սահելով վար կիցնար: Ազնիս իւր բարեկամին յիշատակ մը տալ ուզեց, Կիմա շատ անգամ անոր աղաւնիին պէտ ընտանի աղաւնի մ'ունենալու փափաքը յայտնած էր, ուստի Ազնէս զայն անոր ընծայեց, Կիմա ընաւ չէր ուզեր զայն բնդուելի այն ատեն բարեկամական կերպ մը տեղի ունենցաւ:

Ազնէս կը թախանձեր զԿիմա որ զաղաւնիին ատնէ, նա ալ կաղաչեր որ չտանէ, ինչ եւ իցէ Կիմա վերջապէս առաւ զայն: Ազնիս վանդալին ալ տուաւ անոր եւ աղաւնիին, իւր զաւակն օտարի մը յանձն առնողներու պէս, անոր յանձնատաւ:

Հիւրերուն մէկնելէն վերջը Ազնիս զրէթէ կը զղջար իւր թոշուէն անոր տալուն: «Բաւ եւս էր եթէ տկան ջիւղերս անոր ընծայ տայի փոխանակ աղաւնոյն» կըսէր իւր մօրը: — Զայն ալ ուրիշ անդամ կրնաս տալ, բաւ մայրը, երբոր Կիմա զմեզ տեսնելու գայ, աւելի մեծագին յիշատակ մը անոր չափ ուրախութիւն պիտի չպատճառեր անոնց. եւ թեւեւս զանոնք նկուն պիտ' աններ: Բանմար որ քիչ այնչափ սիրելի էր թեպէտեւ քիչ արժեքով, յայտնեց անոնց թէ զու զիրենք կը սիրես, մի զղջար ընաւ ըրտմիդ համար, տես որ բարի հայրդ մինչեւ իսկ իւր կեանքն ալ տալու պատրաստ էր, տառապեալ որբուայրին եւ որբը աղաւնիւ համար, այն որ կանուխէն չը սովոր սօղնել աղաց համար զանոնք ճշմարտապէս չը սիրեր, այսպէս զոնք հանելի են Աստուծոյ, որ ըսածդ քեզ փոխարինելէ չը դառնար իր քո:

—Երուսաղեմէն հասած հեռագիր մը կը ծանուցանէ թէ այս ատրուան Չառիկ տօնը կատարեալ հանգարտութեամբ անցեր է յիշեալ քաղաքին մէջ, ուր 10000 ի չափ ուխտաւոր ժողովուրդ ներկայ գըտնուեր է :

—Օտանիէ թատրոնի դերասանաց մէկ մասը, ինչպէս յայտնի է, խմբեակ մը կազմելով անցեալ շաբթու մեկնեալ էր մայրաքաղաքէն, երթալ Սելանիկ ամառուան եղանակին մէջ թատերական ներկայացումներ տալու :

Այս անգամ կը լսեմք թէ յիշեալ դերասանական խմբեակը հազիւ թէ չազնաւէն գործ կըրէ, յանկարծ տեղական իշխանութեան կողմէն հետեւեալն տարած թատերական խաղերն, զբեմաններն և այլ նիւթերն գրաւուեր են, պատճառելով թէ Պօլսոյ մէջ արդիւնաւ խաղերը Սելանիկի մէջ ներկայացնելու եկած են :

Այս դէպքին վրայ դերասանական խումբը հեռագիր մը քաշելով իրողութեւնը կը ծանուցանէ Յ. Վարդուխանէ Կիւնտինին որն որ չարեքարթի օրը Բ. Գուսը Մեծ Եպարզտին ներկայանալով խմբագիր մը կը մատուցանէ այս մասին : Յուսարի է թէ հարկ տեսնուած միջոցներն ձեռք առնուելով, պէտք եղած հրամաններն կը տրուին Սելանիկի իշխանութեան, այս մասին արժան գատուած բացատրութեանց հետ ապահովութիւն ալ տրուելով իրեն :

—Դարնէի լրագիրը կը ծանուցանէ թէ Կօմէր օղլու Հիւսէյին անուն հաշակաւոր աւագակապալար իւր ընկերներէն գործուելով պայմաններ է, որուն պիտիկը ջրաղացքի մը մօտ գանձուեր է : Այս շտրագործը, որ 18 տարեկէն ՚ի վեր յիշեալ գաւառին մէջ աւարտութեամբ ու յափշտակութեամբ ժամանակ կանցընէր, մինչև ցարդ կըրցեր էր ոտակիտութեան ամեն խաղարկութիւններէն ազատ մնալու յաջողի :

—Տամպուրաճի խանին խառվածեան առթիւ ձերբակալուող պարսիկներուն ամենքն ալ թող տրուեցան, բայց ՚ի չորս հոգիէ, որոց վրայ կը ծանրանայ եղբր յանցանաց բոլոր պատասխանատուութիւնը :

—Մովսիսի դորձոց պաշտօնէութիւնը կայտերական նաւուց համար յատուկ կաթնոսաներ յանձնարարած ըլլալով ի Լննարա, այս օրերս մայրաքաղաքս բերուած են :

—Հեռագրաւուրք կը ծանուցանեն թէ Թէհէրանի Օտանիան նորընտիր դերասան Միւնիի Էֆէնիին անցեալ շաբթու թէ իւր պաշտօնատեղին հասնելով փառաւոր ընդունուելով իւր գտեր է :

—Իր լսեմք թէ Շուէտ—Նորվեգիոյ դերասանը այսօր մայրաքաղաքէս կը մեկնի Ստոքոլմ քիչ մը ժամանակի համար :

—Կալթիւթ—Սէրայի արքունիան գըրդը պը աւելի աշակերտ ընդունելու անհաւանակ ըլլալով, կառավարութիւնը մտադիր է զայն կիւնտնէի բժշկական գործը փոխող բել, որ աւելի ընդարձակ է և որ Կոնի—Սարայի պարտեղին մէջ շինուած ըլլալով հեռի գրօսատեղիներէ, վարձարանի աւելի յարմար գիրք մ'ունի :

—Հատարակաց կրթութեան նորընտիր պաշտօնեայ ձէվաթի փաշա չարեքարթի օր Տօլմա—պաղչի պարտար վեհ Սոյթմանին ներկայացաւ իւր շնորհակալութիւնն մատուցանելու համար :

—Անձանօթ մէկը Թարապիսի նաւահանգստին բարձրէն ծովն ինտրով, նոյն բըժոյցին հան գանուած շոգենալի մը նու-

ւապեան անմիջապէս նաւակը ծովը իջնուցոյ մարդը աղաւթելու համար : Բայց ամեն տշխտութիւն անօդուա ըլլալով անձանօթը ծովանոցն կորսուեցաւ :

—Անցեալ օր Ռենգափուի շաղացքին տեղիը փողոցին մէջ 60 տարու ծեր մը յանկարծ ինտրով կաթնուածհար մեռեր է :

—Այս օրերս Ռուսիոյ մէջ Ռուսիանի անուամբ լրագիր մը սկսած է հրատարակուիլ : Սոյն լրագրոյն նպատակն է Ռուսիոյ ժողովրդեան լուստարութիւնը և յառաջողութիւնը արժարձել :

Ա Ձ Դ

Յառաջիկայ Նոր կերակէ, ապրիլ 15 Թէրի գիւղի սրբոց վարդանանց Եկեղեցւոյ օժման տարեգարձն ըլլալով, Բերայի արդի քարոզիչ Պրոսպի տաւջնորդ Գերագատիւ Տէր Բարթուղիմէոս սրբազան Արքեպիսկոպոսը հանդիսաւոր Ս. պատուրադ մատուցանելու համար, ի գիտութիւն հայաղղի ժողովրդեան կը ծանուցանեմք. և փոստէ եմք որ, ամէն Հոյ պիտի փութայ նոյն հոգեւոր հանդէսին ներկայ գանուելու :

Բերա 12 Ապրիլ 1873

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԱՇՆԱՆ ՏԵՐԵԻՆԵՐ

ԳԱՂՏՆԻՔ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ

ՊՍԱՆԵԱՅ

Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵՑՆԻ

Սոյն օգտակար գրքոցը, որ անկեալ երկրատարրութեան վերանորոգման վրայ կը խօսի, տրժանի է ամեն չափահաս երիտասարդաց ընթերցման, յոռաւրդ որ պիտի մի՞նձն մեծապէս օգտել :

Կը գտնուի ամեն հայ գրադատուաց քով ի գին 5 դր. և կեղծանատեղիէ Ուղղուն շարքի զլուրը թիւ 362 Թրէնիկոն գրատուել :

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ

ՆԵՐՔԻՆ ԲԵՐՔ

ԲԻՐԻՐԷ. Դարձըս Ա. տեսակ	26—20
ԲԱՄՊԱԿ. Կէրէ	10—5
Ատանա	8—30
Պարտկայտան	7—20
Վրաստան	7—20
ԲՈՒՐԴ. Լուսոցուած	15—
Չըւացուած	7—20
ԳԻՏՈՐ. Սեւ	10—
ՃԷՂԻԻ. Դայնթի	17—
ԹԻՅԹԻԿ. Ենկիւրիի հօխա	145—
Քօնիտ	—
ԱՅՏԻ ՄՈՐԹ մէկ Օտ. Լ. հատը	8—9
ՄԵՂՐԱՄՈՒ ՈՆատ. լիւրան 110 Կն	26—10
Բուսիլի	—
ԱՅԻՕՆ. Առաջին տեսակ	275—380
Մալթիա 15. ՄՅՃԻտ	—

ԱՐՏԱՔԻՆ ԲԵՐՔ

Գլուխ շաքար	սակի	260
Փօշի	Ս. անտակ	251
Խաչիլ		1200—1570
Պղպեղ	օխոյ	12—10
Անաղ լիւր 100 Կն	—	1000 կենդ.
Նիշտար		8—53
Լեղակ (չիվիտ) օխոյ		150—147

Զինիօ	100 օխոն	100 Գրանդ
Գարֆիցայ		151 Կրու
Կալ Ս. Սերիկայ ջուխան	110 ՈՃԻտ	
Կալի Գաղղիոյ քիտիլ		37
ՇԻՐՈՅ		26
Պղնձ Պօլսոյ մէջ		18
Չոյ Բօնիօ	օխոն	51—20
Կրկոթ ճարձև		—
Կրկոթ ճարձև	106	—160
Կրկոթ ճարձև		—180
Կորոզ իւր		14—20
Խաւար		45—80

ՔՆԹԱՅՔ ԴՐԱՄԱՅ

Սնդղ լիւր	ժրու	110—10
Նարուլան		87—10
Խիւլիտալ ուու		89—15
Քրկըմից		81—10
Հիւղոց		104—10
Մէթուրի		104—30

Գ Ո Ր Մ Ա Ն Ա Լ Ո Ւ Բ Ի Ն

- ԱՄՍԱՄ. Խաչատուր աղա Սարաճեան
- ԱՅՆԹԱՊ Բիթերցախարայ ընկերութիւն
- ԱՏԱԲԱՍԱԿ Կարապետ աղա Թոփուլեան
- ԱՏԱՆԱՅ Պետրոս աղա Ջիլիճեան
- ԱՐԴԱԼԻՆ Մ. Արաճաճ աղա Գարդիճեան
- ԱՐԱՊԻՐ Ղօշմեճեան Հաճի Զիւլի
- ԲԱՅԵՐԻ Գեորգ աղա Սարգիսեան
- ԲԱՂԱՍ Աստուածատուր Լիւ Տիլիճեան
- ԲԱՂԷՇ Խաչմանակ Մ. Վարդան աղա
- ԵՂԻՊՏՈՍ Սենեքերիմ Էֆէնի Գաղղանեան
- ԵՐԶԷՆԱՅ Սիմոն աղա Խաչմանակեան
- ԵՌԳԱՅ Յարութիւն Լիւ Սնտրեան
- ԶԷՅՈՒՆ. Հաճի Յարութ Էֆէնի
- ԷՆԿԻՐԻԻ Կարապետ աղա Թոփուլեան
- ԷՏԻՐԷ Մ. Կարապետ Մ. Ամիրեան
- ԹԱՄԱՐԱ Լամբրոնեան Ընկերութիւն
- ԹԷՔԻՐՏԱՂ Սարգիս Էֆ. Փանոսեան
- ԹՈՂԱՅ Մանուէլ Էֆէնի Ս. Սիմոնեան
- ԽԱՐԵՐԻ Յովհաննէս Էֆ. Յարաճեան և
- ՀՈՂԱՐՔՈՒ Տ. Յարութիւն Էֆ. Հէրիմեան
- ԿԱՐԷՆ Դարպաս աղա Վահանեան
- ԿԱՐՍ Սիւրբէ Էֆէնի Էհրամեան
- ԿԷՅՎԷ-ԴՈՒՆԱՅՈՒԼԷՆ Նալբանդաւոր
- ԿԻՐԱՍՈՆ Գ. Ս. աղա Մալթիանեան
- ԿԻՐԻՆ Յակոբ պատուակ
- ԿՈՒՏԻՆԱՅ Նալբանդաւոր Սիմոնեան
- ՀԱՂԱՅ Գեորգ աղա Աստուրեան
- ՄԱՐԱՏ Յարութիւն Էֆ. Մարտիան
- ՄԱՐԶՈՒՆ Յովհաննէս Վ. Պենուհանեան
- ՄԵԼԻՏԻՆԷ Ս. Մ. և Ս. աղա Գարդանեան
- ՄՈՒՇ Վահան աղա Մալթիանեան
- ՆԻԿՈՒՂԵՍ Խաչմանակ Էֆէնի Էհրամեան
- ՈՒՐՏԱ Յակոբ Պատուակ Սրեան
- ՉԱՐԱՍԱՅԱՍ Մ. Կարապետ Էֆէնի
- ՊԱՆՏՐԱՅ Սրտի աղա Էհրամեան
- ՊԱՅՈՒ Աղիա պատուակ Տ. Շ. Գ.
- ՊԱՐՏԻՉԱԿ Մ. Յարութիւն Տ. Կարապետ
- ՊԱՐՈՒՄ Ստեփան աղա Կիւրճեան
- ՈՍՄԱՆ Յակոբ աղա Ղլանտեան
- ՍԵՐԱՍԻԱ Սիմոն Էֆէն. Հէրիմեան
- ՍԻՒՍԻՐԷ Հոյ Ընկեր ընկերութիւն
- ՍԻՒՍԻՐԻՍ Յակոբ աղա Գաղղանեան
- ՎԱՆ Գեորգ Էֆ. Աճմարացեան
- ՏՐԱՊԵՉՈՆ Կարապետ աղա Սարգիսեան
- ՏԻՂԱՆԱԿԵՐՏ Գեորգ աղա և Չալմեճեան
- ԲԴԻ Մ. Տ. Ա.

ԽՄԲԱԳԻՐ ԵՒ ՏՊԱԳԻՐԶ ԱՆՈՐԱՆԻԿ ՎԱՐՈՒՆԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՎԱՐՈՒՆԵԱՆ և ՊՈՒՍ ԳՈՒՍՐՈՒ ԽԱՆ